ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թվականի N 1892 - Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի առաջին մասը և 605-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 4-րդ մասը, ինչպես նաև 25-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին ամրացված՝ սույն որոշման N 1 հավելվածում նշված, ինչպես նաև N 2 հավելվածում նշված՝ պետական սեփականություն հանդիսացող գույքը հետ վերցնել և նվիրաբերել «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամին (այսուհետ՝ հիմնադրամ)՝ նշված գույքի կառավարումն ու սպասարկումն ապահովելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին ամրացված՝ սույն որոշման N 3 հավելվածում նշված՝ պետական սեփականություն հանդիսացող գույքը հետ վերցնել և նվիրել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին:

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հիմնադրամի ղեկավարի հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված գույքի նվիրաբերության պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ՝

ա. սույն որոշման 1-ին կետից բխող նվիրաբերության հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման հիմնադրամի միջոցների հաշվին,

բ. նվիրաբերության պայմանի խախտման հիմքով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրաբերության վերացման դեպքում նվիրաբերություն ստացողի կողմից նվիրաբերված գույքի վրա կատարված անբաժանելի բարելավումները փոխհատուցման ենթակա չեն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի տնօրենի հետ կնքել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված գույքի նվիրատվության պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ նվիրատվության հետ կապված ծախսերն իրականացվելու են «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի միջոցների հաշվին, և ապահովել հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

3) սույն կետի 1-ին ենթակետում նշված պայմանագրի կնքումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

4. Սահմանել, որ սույն որոշման NN 1 և 2 հավելվածներում նշված գույքի համար հիմք է ընդունվում դրանց հաշվեկշռային արժեքը, իսկ դրանց հաշվեկշռային արժեքի բացակայության դեպքում, որպես այդ գույքի արժեք, հիմք է ընդունվում դրա ձեռքբերման արժեքը:

5. Սահմանել, որ սույն որոշման NN 1 և 2 հավելվածներով սահմանված գույքի հանձնումը հիմնադրամին իրականացնում է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն:

6. Առաջարկել հիմնադրամի ղեկավարին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնել պետական մարմինների կողմից սույն որոշմամբ նախատեսված գույքի սպասարկման մոդելի վերաբերյալ առաջարկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ